

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հաճախ Տրվող Հարցեր (FAQ) – Ռեստորանների Արձանագրություններ

Վերջին թարմացումներ.

8/22/20: Ավելացվել է հարց՝ պարզաբանելու, որ ռեստորանները կարող են միացնել ձայնագրված երաժշտություն և հեռուստացույց դրսում ճաշող հյուրերի համար: Երաժշտության կամ հեռուստացույցի ձայնը պետք է այնպես կարգավորել, որ աշխատողները կարողանան հաճախորդներից հեռավորություն պահպանել պատվերները լսելիս: (փոփոխություններն ընդգծված են դեղին գույնով)

### 1. Ինչի՞ են սպասարկող անձնակազմի և մյուս աշխատակիցների համար անհրաժեշտ դեմքի վահանները սեղանի շուրջ հաճախորդներին սպասարկելիս:

Ամբողջ սպասարկող անձնակազմը և աշխատակիցները գտնվում են դիմակ չկրող հաճախորդների կողմից շնչառական կաթիլների ներգործության բարձր ռիսկի ներքո, ինչպես նաև այն անձանց կողմից, որոնք անձնակազմից կամ մատուցողից 6 ոտնաչափ հեռավորության սահմաններում են գտնվում:

### 2. Ո՞րն է դեմքի վահան կրելու օգուտը:

Դեմքի վահանները՝ ինչպես օրինակ ապակե վահանները, օգնում են նվազեցնել դիմակ չկրող հաճախորդների կողմից շնչառական կաթիլների փոխանցման ռիսկը, որոնք կարող են հայտնվել աշխատակցի դեմքին, աչքերին կամ դիմակին: Կտորե դիմակները պաշտպանում են մյուսներին դիմակ կրողի կաթիլներից, դեմքի վահաններն օգնում են պաշտպանել այն կրողին մյուսների կաթիլներից:

### 3. Ի՞նչ է դեմքի վահանը:

Դեմքի վահանները պարզ/թափանցիկ պլաստմասսե շերտեր են, որոնք հաճախ կապվում են ճակատին, և ապահովում են պաշտպանիչ շերտ այն կրողի դեմքի շրջանում: Նրանք չեն փոխարինում դիմակներին: Նրանք պետք է ծածկեն ճակատը՝ տարածվելով մինչև կզակի ստորին հատվածը և պատելով դեմքը: Դեմքի վահանները հասանելի են ինչպես մեկանգամյա օգտագործման, այնպես էլ բազմակի օգտագործման տարբերակներով:

### 4. Կարո՞ղ են դեմքի վահանները վերաօգտագործվել:

Դեմքի վահանը չպետք է համատեղ օգտագործվի աշխատակիցների միջև և պետք է մաքրվի և ախտահանվի (վերամշակվի), երբ այն տեսանելիորեն աղտոտված է, օրական առնվազն մեկ անգամ (յուրաքանչյուր հերթափոխից հետո) վերաօգտագործումից առաջ: Նրանք պետք է պահվեն թափանցիկ պլաստմասսե տարայի մեջ և վրան ունենան փակցված աշխատակցի անունը՝ պատահաբար մյուս աշխատակիցների կողմից օգտագործումը կանխելու համար:

### 5. Ի՞նչ է անհրաժեշտ վերամշակման գործընթացի համար:

Վերաօգտագործվող դեմքի վահանները պետք է օգտագործվեն և ախտահանվեն արտադրողի հրահանգներին համապատասխան: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել ասյտեղ՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/hcp/non-us-settings/emergency-considerations-ppe.html>.

### 6. Կարո՞ղ են դեմքի վահանների փոխարեն օգտագործվել պաշտպանիչ ակնոցներ (goggles):

Ո՛չ: Դեմքի վահաններն աշխատակիցների համար ապահովում են դեմքի ավելի մեծ և լայն հատվածի պաշտպանություն՝ այլ անձանց շնչառական կաթիլներից:

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հաճախ Տրվող Հարցեր (FAQ) – Ռեստորանների Արձանագրություններ

- 7. Արդյո՞ք դեմքի վահաններն անհրաժեշտ են մաքրող անձնակազմի համար:**  
Բազմակի օգտագործման պարագաների մաքրման համար նշանակված աշխատակիցներին պետք է տրամադրվեն դիմակ և պաշտպանիչ ակնոցներ կամ դեմքի վահաններ՝ իրենց աչքերը, քիթը և բերանը ցայտման հետևանքով վարակից պաշտպանելու համար: Վերաօգտագործվող պաշտպանիչ սարքերը օրինակ դեմքի վահանները և ակնոցները պետք է պատշաճ կերպով ախտահանվեն օգտագործվելուց առաջ և հետո:
- 8. Կտորե դիմակ կրելը պահանջ է, թե՞ խորհուրդ:**  
Բոլոր աշխատակիցներից պահանջվում է կրել կտորե դիմակ միմյանց և հաճախորդների կամ հյուրերի հետ շփվելիս: Այն պահանջվում է նաև հանրային վայրեր այցելելիս: Անձինք, ովքեր ունեն առողջական խնդիրներ, որոնց պատճառով չեն կարող դիմակ կրել, բացառություն են կազմում՝ ինչպես 2 տարեկանից փոքր երեխաների դեպքում:
- 9. Ե՞րբ պետք է սննդի հաստատության ղեկավարը Հանրային Առողջապահությանը տեղեկացնի COVID-19-ով վարակված կամ COVID-19-ով վարակված լինելու համար կասկածվող աշխատակիցների մասին:**  
Սննդի հաստատության ղեկավարը պետք է տեղեկացնի Հանրային Առողջապահությանը, երբ 14 օրվա միջակայքում աշխատակիցների շրջանում ի հայտ են գալիս COVID-19-ով վարակման կամ COVID-19-ով վարակված լինելու համար կասկածվող (3) կամ ավելի դեպքեր: Հանրային Առողջապահությանը կարող եք տեղեկացնել՝ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով:
- 10. Արդյո՞ք սննդի հաստատությունը պետք է հրապարակի <<Տեղում ճաշելու համար Ռեստորանների Բացման Արձանագրություն: Հավելված I>>-ի բոլոր էջերը, թե՞ միայն առաջին էջը:**  
Սննդի հաստատության ղեկավարը պետք է կիրառի <<Արձանագրությունը>> և փաստաթուղթն ամբողջապես տեղադրի մուտքի մոտ, որտեղ հաճախորդների համար մտնելիս տեսանելի կլինի:
- 11. Կան հրատարակված մի քանի <<Առողջապահական Հրամաններ>>: Ինչպե՞ս իմանամ՝ որ մեկին պետք է հետևել:**  
Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է գիտական և հանրային առողջապահության փորձով աջակցվող փուլային մոտեցում՝ ընդլայնելու բիզնեսների գործունեությունը: Որպես այդպիսին՝ կարևոր է հաճախ այցելել Հանրային Առողջապահության վեբ կայք՝ Առողջապահության Պատասխանատուի ամենավերջին Հրամանների, կանոնավոր թարմացումների և ամենավերջին ուղեցույցների համար: Դրանք կարող եք գտնել այստեղ՝ <http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/>.
- 12. Ո՞րն է Առողջապահության Պատասխանատուի Հրամանի (HOO) վերաբերյալ տեղեկություններ ստանալու հղումը:**  
Առողջապահության Պատասխանատուի Հրամանը կարող եք գտնել այստեղ՝ <http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/>.
- 13. Կարո՞ղ է սննդի հաստատությունը սեղանին թողնել աղի և պղպեղի տարաները:**  
Աղի և պղպեղի տարաները չպետք է հասանելի լինեն սեղանի վրա մինչև մյուս խումբ անձանց սեղանի շուրջ նստելը, քանի դեռ դրանք չեն մաքրվել և ախտահանվել նրանց նստելու առաջ:

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հաճախ Տրվող Հարցեր (FAQ) – Ռեստորանների Արձանագրություններ

Առավելագույնս խորհուրդ են տրվում մեկնագամյա օգտագործման համեմունքները:

### 14. Ինչ տեսակի նյութեր կարող են օգտագործվել պատնեշների համար:

Պատնեշները պետք է պատրաստված լինեն անթափանց, մաքրվող, և ամուր նյութերից, որոնք կարելի է հաճախ լվանալ:

### 15. Կարո՞ղ է ճաշկերույթի սրահը բաց լինել բիզնեսների համար:

Ճաշկերույթի սրահը իրավասու չէ անցկացնելու որևէ միջոցառում կամ հավաքույթ հաստատության տարածքում: Սակայն, եթե ճաշկերույթի սրահը տվյալ պահին ռեստորանային թույլտվություն ունի, ապա ճաշկերույթի հաստատությունը կարող է օգտագործել այդ տարածքը՝ առաջարկելու միայն նստելու, բացօթյա ճաշելու ծառայություններ, եթե հասանելի են, և պետք է հետևի *Հավելված 1: Տեղում ճաշելու Համար Ռեստորանների Բացման Արձանագրությանը* (վերանայված հրամանը թողարկվել է 2020 թվականի Հուլիսի 1-ին): Հնարավորության դեպքում ճաշկերույթի սրահները և ռեստորանները կարող են առաջարկել մուտենալ- վերցնելու և առաքման ծառայություններ:

### 16. Եթե ռեստորանի աշխատակիցն առողջական խնդրի պատճառով ի վիճակի չէ դիմակ կրելու՝ արդյո՞ք աշխատակիցն ազատվում է դիմակ կրելու պարտավորությունից:

Պետք է գործադրվեն բոլոր ջանքերը սննդի ոլորտի աշխատակցին, որի առողջական խնդիրները ետ են պահում իրեն դիմակ կրելուց, վերանշանակելու այն պարտականությունների իրականացմանը, երբ նա չի շփվում հանրության կամ չպաշտպանված սննդի կամ խմիչքների հետ: Եթե աշխատակցին չի թույլատրվում կրել դիմակ, ապա հաճախորդներին բացօթյա ճաշելու տարածքներում սպասարկելիս նա պետք է կրի դեմքի վահան՝ ստորին հատվածին փակցված կտորով, որը ծածկում է կզակը, և այդ աշխատակիցը պետք է ենթարկվի ախտանիշների ավելի մանրակրկիտ ստուգման, ինչպես օրինակ պարտադիր ջերմաչափումները:

### 17. Կարո՞ղ է սեղանի խաղեր առաջարկող սրճարանը գործել և թույլ տալ հաճախորդներին նստել և խաղալ սեղանի խաղեր (ինչպես օրինակ՝ Սոնոպոլիս, շախմատ, շաշկի և այլն):

Ո՛չ: Առողջապահության Պատասխանատուի ներկայիս Հրամանը արգելում է զվարճանքին առնչվող գործունեությունը: Ռեստորանը կարող է տրամադրել սննդի ծառայություններ՝ ներառյալ տեղում բացօթյա ճաշելու տարբերակը, բայց առանց խաղերի անցկացման:

### 18. Արդյո՞ք բացօթյա ճաշելու համար անհրաժեշտ կլինեն պատնեշներ, և ինչպե՞ս են դրանք հաստատվում:

Եթե նստատեղը տեղակայված է մայթի վրա, ապա պետք է տրամադրվի 6 ոտնաչափ բարձրություն ունեցող անթափանց և մաքրվող պատնեշ՝ ճաշողներին հետիոտներից պաշտպանելու համար, եթե 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել հնարավոր չէ: Մայթերին կամ կայանատեղիներում սեղաններ տեղադրելու համար անհրաժեշտ է խորհրդակցել տարածքային տեղական պատասխանատուների հետ: Այլապես՝ բացօթյա տարածքներում նստելը պետք է նախատեսի առնվազն 6 ոտնաչափ տարածական հեռավորություն յուրաքանչյուր սեղանի միջև (6 ոտնաչափ հեռավորությունը պետք է հաշվարկվի հաճախորդի դիրքից): Պատնեշները պետք է պատրաստված

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հաճախ Տրվող Հարցեր (FAQ) – Ռեստորանների Արձանագրություններ

լինեն անթափանց, մաքրվող, և ամուր նյութերից, որոնք կարելի է հաճախ լվանալ և ախտահանել:

### 19. Ո՞րն է բացօթյա ճաշելու սեղանների միջև հեռավորության պահանջը:

Բացօթյա ճաշելը իրենից ենթադրում է հաճախորդների խմբերի միջև առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանում:

### 20. Կարո՞ղ են հաճախորդները ինքնասպասարկման տարբերակով վերցնել իրենց յոգուրտները և լցնումները յոգուրտների տրամադրման վայրից:

Ո՛չ: Ինքնասպասարկման ապարատները, ինչպես օրինակ սառեցված յոգուրտի ապարատները և լցնումները պետք է տրամադրվեն աշխատակցի կողմից, ինչպես նաև պետք է հաճախ լվացվեն և ախտահանվեն:

### 21. Կարո՞ղ է բացօթյա ռեստորանում լինել կենդանի երաժշտություն կամ DJ:

Ներկայումս Առողջապահության Պատասխանատուն հրամայել է փակել կենդանի ներկայացմամբ թատրոնները, համերգների անցկացման վայրերը և բոլոր միջոցառումները և հավաքույթները: <<Տեղում ճաշելու Համար Ռեստորանների Բացման Արձանագրություն: Հավելված I>>-ը նախատեսված չի եղել համերգների, ներակայացումների և ժամանցի վայրերի համար, որոնք ունեն տեղում սնունդ տրամադրելու ծառայություն:

### 22. Ես ռեստորանում սննդի ոլորտի աշխատակից եմ, ի՞նչ պետք է անեմ, եթե իմ COVID-19-ի թեստի պատասխանը դրական է:

Երբ սննդի ոլորտի աշխատակցի COVID-19-ի թեստի պատասխանը դրական է, աշխատակիցը պետք է մնա տանը և հետևի Հանրային Առողջապահության [ինքնամեկուսացման](#) հրահանգներին: Գործատուն պետք է տեղում արձանագրություն ունենա՝ աշխատակցին անմիջապես տուն՝ մեկուսանալու ուղարկելու և պահանջելու անհապաղ ինքնամեկուսացում բոլոր այն աշխատակիցների համար, որոնք սերտ շփում են ունեցել այդ աշխատակցի հետ կամ առնչվել են աշխատավայրում այդ դեպքին (դեպքերին):

### 23. Որո՞նք են Առողջապահության Պատասխանատուի Հրամանում կատարված նոր փոփոխությունները, որոնք վերաբերում են ռեստորաններին, բարերին, գարեջրանոցներին, թորանոցներին, գարեջրատներին և գինեգործարաններին:

Առողջապահության Պատասխանատուն հրամայել է փակել բարերը, գարեջրանոցները, դեգուստացիոն (համտեսման) սենյակները, թորանոցները և գինեգործարանները, որոնք ունեն Լոս Անջելեսի շրջանի կողմից տրված ցածր ռիսկային ռեստորանների համար հանրային առողջապահության վավերական թույլտվություն: 2020 թվականի Հուլիսի 1-ից սկսած բոլոր ռեստորանները՝ ներառյալ փակ մոլերի կամ առևտրի կենտրոնների տարածքում գործող սննդի համար նախատեսված վայրերը, պետք է դադարեցնեն ներսում, անձամբ տեղում ճաշելու ծառայությունը՝ մինչև հետագա ծանուցումը: Ռեստորանները կարող են շարունակել առաջարկել

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հաճախ Տրվող Հարցեր (FAQ) – Ռեստորանների Արձանագրություններ

նստելու, բացօթյա տարածքում ճաշելու տարբերակները, երբ սնունդը պատրաստվում է տեղում՝  
ինչպես թույլատրված է Առողջապահության Պատասխանատուի Հրամանի համաձայն

**24. Այժմ, երբ փակ տարածքներում անձամբ ճաշելու սենյակները փակ են, մենք ցանկանում ենք վստահ լինել, որ մեր հյուրերն իրենց հարմարավետ են զգում տաք եղանակին: Կարո՞ղ ենք արդյոք ունենալ հովացնող ցողիչներ, և արդյո՞ք դրանք ընդունելի կլինեն COVID-19-ի աշխարհում:**

Այո՛, հովացնող ցողիչները (patio misters) թույլատրվում են և կարող են օգտագործվել:

**25. Կարո՞ղ են ռեստորանները օգտագործել պատնեշներ բացօթյա ճաշելու տարածքների համար, եթե նստատեղերի քանակի ավելացման համար 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանումը հնարավոր չէ:**

Այո՛: Պատնեշների օգտագործումը կարող է թույլատրվել, երբ 6 ոտնաչափ ֆիզիկական/ սոցիալական հեռավորություն պահպանել հնարավոր չէ, կամ , երբ անհրաժեշտ է բացօթյա ճաշելու տարածքներում հաճախորդների սեղանների/ նստատեղերի քանակի ավելացման համար: Բացօթյա ճաշելու տարածքները չեն նախատեսում տեղի/ քանակի սահմանափակում: Մայթերին կամ կայանատեղիներում սեղաններ տեղադրելու համար անհրաժեշտ է խորհրդակցել տարածքային տեղական պատասխանատուների հետ: Անթափանց պատնեշները պետք է ապահովեն գետնից առնվազն 6 ոտնաչափ բարձրություն (կամ ավելի բարձր՝ այնտեղ, որտեղ ավելի բարձր նստատեղեր են օգտագործվում), որպեսզի հաճախորդների միջև շփումը նվազագույնի հասցվի:

**26. Առողջապահության Պատասխանատուի գործող պահանջներին զուգահեռ՝ անձամբ ճաշելը թույլատրելով միայն բացօթյա տարածքներում, ինչպե՞ս են սահմանվում բացօթյա տարածքները:**

Բացօթյա ճաշելը սահմանվում է որպես հարակից, բացօթյա տարածքի օգտագործում՝ ոչ ավել քան մեկ ամուր պատի առկայությամբ՝ անձամբ ճաշելու և խմելու համար, ինչը տեղի է ունենում հաստատության սահմաններում: Ճաշելու համար նախատեսված բացօթյա տարածքները կարող են ընդլայնվել մայթերի և կայանատեղիների ուղղությամբ: Եթե ճաշելու բացօթյա տարածքները մայթի վրա են, ապա առնվազն 6 ոտնաչափ բարձրությամբ անթափանց և մաքուր պատնեշ պետք է տեղադրվի՝ ճաշողներին հետիոտններից պաշտպանելու համար, եթե հնարավոր չէ պահպանել 6 ոտնաչափ սոցիալական / ֆիզիկական հեռավորություն: Մայթերին կամ կայանատեղիներում սեղաններ տեղադրելու համար անհրաժեշտ է խորհրդակցել տարածքային տեղական պատասխանատուների հետ: Շրջակա բացօթյա միջավայրի շնորհիվ բացօթյա ընթրիքը կարող է զգալիորեն նվազեցնել մեկ անձի կողմից մյուսին COVID-19- ով վարակելը:

Ճաշելու բացօթյա տարածքները չեն ներառում հետևյալը՝

- Ցանկապատ՝ ամբողջական ծածկով, որը թույլ չի տալիս օդի պատշաճ ներթափանցում
- Ներսում ճաշելու տարածքները՝ վերև բարձրացված պատուհաններով

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հաճախ Տրվող Հարցեր (FAQ) – Ռեստորանների Արձանագրություններ

**27. Արդյո՞ք գուգարանները պետք է հասանելի լինեն մեքենայով մոտեցող վերցնող հաճախորդների համար՝ անգամ եթե փակ տարածքների համար նախատեսված ճաշելու տարբերակ և վերցնել-տանելու ծառայություններ չեն գործում:**

Այո՛: Նշելով, որ Ձեր ռեստորանի հիմնական մուտքի դռները կարող են փակ լինել, այնուամենայնիվ եթե նախքան COVID-19-ը ձեր հաստատությունը հաճախորդին առաջարկել է գուգարաններից օգտվելու ծառայություն, ապա գուգարանները պետք է շարունակեն հասանելի մնալ հաճախորդների համար: Եթե ձեր ռեստորանը սնունդ է առաջարկում 3-րդ կողմի առաքման ծառայության միջոցով (օրինակ՝ Door Dash, Grubhub և այլն), ապա սնունդը վերցնող վարորդների համար գուգարանները պետք է հասանելի լինեն (եթե սովորաբար հաճախորդների համար բաց են) նախքան առաքման համար սնունդը վերցնելը ձեռքերը լվանալու համար:

**28. Ընթացիկ արձանագրություններում նշվում է, որ ռեստորաններում կենդանի զվարճանքն արգելված է: Արդյո՞ք սա ներառում է կենդանի երաժշտության հնչեցումը կամ հյուրերի համար հեռուստացույցի միացումը՝ որպես բացօթյա ճաշի անցկացման մի մաս:**

Ո՛չ: Ռեստորանները կարող են միացնել ձայնագրված երաժշտություն և հեռուստացույց դրսում ճաշող հյուրերի համար: Երաժշտության կամ հեռուստացույցի ձայնը պետք է այնպես կարգավորել, որ աշխատողները կարողանան հաճախորդներից հեռավորություն պահպանել պատվերները լսելիս: